

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



ԵՒԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Քանասիրական գիտ. դոկտոր, դոցենտ, ՀՀ ԳԱԱ ԳԻ, ՀՊՄՀ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԿԵՐՊԱՐԸ Ե. ՂԱՐԻ ՅԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Օտար պետությունների քաղաքական շահերի բախման խաչմերուկում ծվարած Հայաստանի համար քրիստոնեությունը եղել եւ մնում է ոչ միայն հոգեբուխ կենարար հավատք, այլեւ քաղաքական, գաղափարական ու մշակութային ինքնության ու ինքնուրույնության հաստատման նախահիմք:

Քրիստոնեության տարածման ու ամրապնդման գործում բացառիկ դեր են կատարել հոգեւորականները, որոնց անուրանալի ծառայությունը ժողովրդին պատմվել ու փոխանցվել է սերնդեսերունդ: Նրանց հոգեւոր, եկեղեցաշինական գործունեությունը հյուսվել է իբրեւ սրբախոսություն, վարք, վկայաբանություն, տեղ գտել մատենագրության էջերում: Հաճախ հիշյալ ժանրերում հոգեւոր հայրերը իրական դեմքերից վերածվել են գեղարվեստական կերպարների:

Ուսումնասիրության խնդրադրության շրջանակում մեր նպատակն է անդրադառնալ ոսկեդարյան գրականության էջերում հառնող մեծ Ուսուցչապետի կերպարին, որը՝ իբրեւ սրբադասված պատմական դեմք, կրում է պատմագրության ու վարքագրության ժանրային առանձնահատկություններ, համադրական բնույթով պայմանավորված նշաններ:

Հայոց գոյաբանական կեցության հավերժական ընթացքն ուղեկցող մեծություն է սուրբ Մեսրոպ Մաշտոցը, որի աստվածային առաքելության խորհուրդը դեռեւս կենդանության օրոք ընկալվել է համահավաք գիտակցությամբ: Նրա սուրբ աջով է ծնունդ առել հայոց գիրը, եւ դրվել հիմքը հայ գրականության ու հայոց դպրության: «Մաշտոցն իհարկե իր ժամանակի ծնունդն էր եւ բնականաբար նա մենակ չի կատարել այդ գործը,— գրում է Մ. Աբեղյանը:— Նրա հետ եղել են Սահակ կաթողիկոսը,

Վռամշապուհ թագավորը եւ Սահակի ու Մաշտոցի աշակերտները: Բայց նա առաջինն է եղել այդ լուսավորական գործի մեջ, եւ ժամանակակիցներն էլ առաջին պատիվը նրան են տալիս»¹:

Մաշտոցի ազգապահպան առաքելությունը մշտապես եղել է ինչպես իր ժամանակի, այնպես եւ գրեթե բոլոր հայ հեղինակների ուսումնասիրության առարկա: Նրա մասին գրել են շատերը՝ Մովսես Կաղանկատվացի, Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Ստեփանոս Օրբելյան, Ղեւոնդ Ալիշան, Հովսեփ Գաթրճյան, Ի. Հարությունյան, Մ. Օրմանյան, Մ. Աբեղյան, Հ. Մանանդյան, Ն. Ակինյան, Յ. Մարկվարտ, Վ. Նալբանդյան, Արտ. Մարտիրոսյան եւ ուրիշներ: Սակայն Մաշտոցի՝ իբրեւ տիեզերական երեւույթի գնահատման իմաստով պատմագիտական, մշակութաբանական, աղբյուրագիտական բացառիկ նշանակություն ունեն Կորյունի² «Վարք Մեսրոպ Մաշտոցի» երկը, Խորենացու եւ Փարպեցու «Հայոց պատմություն» աշխատությունները, որոնք արժեհամակարգային վերագնահատման այս խուռն ժամանակներում ազգային մեծագործության հաստատման խոսուն վկայագրեր են:

Ուսումնասիրության խնդրադրության շրջանակում մեր նպատակն է անդրադառնալ Ե. դարի մատենագրության էջերում հառնող մեծ Ուսուցչապետի կերպարին, որը բուն իմաստով, անշուշտ, գեղարվեստական հղացում չէ, բայց իբրեւ իրական հիմքի վրա կենդանագրված դիմանկար՝ ավելին է, քան գեղարվեստական կերպարը: Այն կրում է պատմականորեն ստույգ, միաժամանակ խիստ անձնավորված նշաններ՝ պայմանավորված պատմագրության ու վարքագրության ժանրային առանձնահատկությամբ, համադրական բնույթով:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ՍՐԲԱԿԵՆՑԱՂ ՎԱՐՔԸ

ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ե. դարի մատենագրության ենթաշերտերում բացահայտվում են Մաշտոցի հոգեւոր-մարդկային, ազգային-հասարակական նկարագիրը, բնատուր տաղանդի ուրվագրումները, հայրենանվեր քրիստոնյայի աննախա-

¹ Մ. ԱԲԵՂՅԱՆ, Մեսրոպ Մաշտոցը եւ հայ գրի ու գրականության սկիզբը, «Սովետական գրականություն», հմ. 1, Երեւան, 1941, էջ 47:

² Կորյունը (380–450) Մեսրոպ Մաշտոցի առաջին աշակերտներից է: Նրանից մեզ հասած վավերական գործը Մեսրոպ Մաշտոցի կենսագրությունն է, որ գրել է Հայոց կաթողիկոս, Մաշտոցի աշակերտ Հովսեփ Ա. Վայոցձորցու պատվերով:

դեպ գործունեությունը: «Մեսրոպը իր կատարած գործով ամենամեծն է մեր պատմական հերոսների մեջ,— գրում է Լեոն:— Իր այդ անուան համապատասխան էլ մի բացառիկ, գոնե մեզանում չեղած, բախտի է նա արժանացել.— առաջին հայ գործիչն է նա, որ ականատեսի ձեռքով գրուած առանձին կենսագրություն ունի»³:

Մաշտոցի մասին հայատառ առաջին աշխատությունը պատկանում է նրա կրտսեր աշակերտին՝ Կորյունին, որը բացառիկ ու արժանահավատ տեղեկություններ է հայտնում հայ գրի ու գրականության սկզբնավորման մասին՝ դառնալով անփոխարինելի սկզբնաղբյուր թե՛ ժամանակի, թե՛ հետագա ուսումնասիրողների համար: Կորյունը Մաշտոցի կյանքը բաժանում է երկու շրջանի՝ աշխարհիկ ու հոգեւոր, սակավ տեղեկություններ տալիս Ուսուցչի ծննդյան, աշխարհիկ կյանքի մասին, ներկայացնում նրան իբրեւ կրթված ու զարգացած մարդու, զինվորականի, որը մտահոգված է իր ժողովրդի ճակատագրով: Վարքագիրն այնուհետեւ ներկայացնում է նրա կրոնական-ճգնակեցական կյանքը եւ առաքելական գործունեությունը: Գողթնի «անկարգ ու անխնամ թողած տեղերից» սկսելով աստվածահաճո առաքելությունը՝ Մաշտոցը բախվում է ժամանակի առաջ ծառացած մի շարք դժվարությունների, որոնք վաղուց հայ ժողովրդի համար վերածվել էին գոյաբանական խնդիրների:

387 թ. Հայաստանը «հնացած ձորձի նման» բաժանվել էր Պարսկաստանի եւ Բյուզանդիայի միջեւ: Բյուզանդիայի մեծապետական քաղաքականության արդյունքում վերացվում է հայկական թագավորությունը, իսկ «դիվանագիտական խարդախությունները եւ նույն քրիստոնեական կրոնը իր աշխարհաքաղաքացիական բովանդակությամբ վտանգի տակ էին դնում հայերի ազգային գոյության խնդիրը»⁴: Հայաստանի արեւելյան հատվածի կիսաանկախ գոյությունը պահպանելու համար Հայոց պետության շահերը պահանջում էին քրիստոնեության ամրապնդում⁵: Թեպետ

³ Լեո, Ս. Մեսրոպ, Թիֆլիս, 1904, էջ 145:

⁴ Ժ. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, Հայ գրականագիտության պատմություն, Երևան, 1986, էջ 13:

⁵ «Ռազմական ու քաղաքական առումով իրանական ու հռոմեական զորեղ աշխարհակալությունների ճնշմանը տեղի տալով եւ զրկվելով քաղաքական միասնականությունից՝ հայ էթնոսը պետք է լարեր բոլոր ուժերը՝ իր հոգեւոր ամբողջականությունն ու ինքնությունը պահելու համար: Այդ գերխնդիրը չլուծելու պարագայում հայ էթնիկ հանրությանն անխուսափելի կործանում էր սպառնում: Ելքը մեկն էր՝ կերտել ինքնատիպ ու հարուստ մշակույթ, նպատակալից գաղափարախոսական համակարգ, ազգայնացնել քրիստոնեական եկեղեցին, ձեռք բերել հոգեւոր անկախություն» (Հայոց պատմություն, Երևան, 2012, էջ 168):

Հայոց աշխարհում կային քրիստոնեական համայնքներ, եկեղեցի, սակայն, հայկական իրականությունն որամուտ հավատը դեռևս մնում էր մակերեսային-ենթագիտակցական մակարդակի վրա. «Այն տակավին ընկալելի էր լոկ սրտի համար: Մինչդեռ անհրաժեշտ էր, որ սրտի մեջ բնակվեր Միտքը: Դրա պետքը քաջ գիտակցող առաջին եւ մեծագույն հայը Ս. Մեսրոպ Մաշտոցն էր»⁶:

Մաշտոցը Գողթն գավառում գործնականորեն տեսնում է այլալեզու քարոզչության, եկեղեցական արարողությունների հարուցած խոչընդոտն ու դժվարությունները: Խորենացին գրում է. «Եւ ի վարդապետել երանելոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող եւ թարգմանիչ. եւ եթէ այլ ոք ընթեռնոյր, ուր նա ոչ հանդիպէր՝ զանխուլ ի ժողովրդոցն լինէր, յաղագս ոչ լինելոյ թարգմանիչ: Վասն որոյ եդ ի մտի հնարել գտանել նշանագիրս Հայոց լեզուիս»⁷: Ուրեմն հայոց գրի ստեղծումը հրամայական պահանջ էր նախեւառաջ քրիստոնեության ամրապնդման, խորքային ճանաչումի արմատավորման եւ երկրի ներքին ուժերը համախմբելու գործում: «Եւ արկեալ զանձն ի ջանս՝ պէս պէս փորձիւք տաժանէր»⁸, – շարունակում է Խորենացին՝ մատնանշելով փաստը, որ մինչեւ Վռամշապուհից հանձնարարական ստանալը Մաշտոցը փորձել է ինքնուրույնաբար ստեղծել հայոց այբուբենը:

Մեթոդաբանական առումով թե՛ Կորյունը, թե՛ Խորենացին, թե՛ Փարպեցին հաճախ նախընտրում են ուսուցչի վարժաբանության՝ հոգեւոր կենցաղավարության եւ ստեղծարար որոնումների, մարդկային փոխառնչությունների նկարագրություններ, որոնց միջոցով ուրվագծվում են նրա էությունը, վարժագիծը, արարքների շարժառիթներն ու նախադրյալները: Արձանագրենք, սակայն, որ Կորյունը գիտակցաբար կամ որոշակի հանգամանքներով պայմանավորված, բաց է թողնում Մաշտոցի կենսագրության որոշ մանրամասներ, ժամանակի արտաքին ու ներքին քաղաքական, եկեղեցական անցուղարձեր՝ երբեմն հարուցելով ուսումնասիրողների դժգոհությունը: Օրինակ՝ Լեոն, բարձր գնահատելով Կորյունի վարժագրության անփոխարինելի դերը, նկատում է, թե այն «իբրեւ

⁶ «Հայ մատենագիրները Հայոց գրի եւ թարգմանչաց մասին», աշխատ.՝ Հ. Քյոսեյանի, Վ. Դելրիկյանի, Երեւան, 2019, էջ 8:

⁷ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, Հայոց պատմություն, Երեւան, 1981, էջ 390:

⁸ Անդ, էջ 390:

պատմական երկասիրութիւն, շատ խեղճ գործ է»⁹։ Լեոն գրքի էջերում որոնում է պատմաբանի, այնինչ հանդիպում է միայն «հիացած աշակերտի»։ Ն. Ակինյանը եւս նկատում է, որ Կորյունը, իր գրվածքին տալով վարքագրական նկարագիր, «կամ հարեւանցի եւ կամ բոլորովին լռութեամբ անցած է Մաշտոցի, Սահակի եւ ժամանակակից քաղաքական եւ եկեղեցական պատմութեան հայող մասնական դէպքերու վրայէն»¹⁰։

Բոլոր պարագաներում Կորյունին հաջողվում է իր առաքելությունն իրագործել վարքագրութեան ժանրի շրջանակում։ Գրքի նախաբանում նա վերահաստատում է այն իրակութիւնը, որ կատարյալ մարդկանց վարքը գրի առնելն ունի հստակ ու որոշարկված նպատակ. մեծարելի ուսուցչի վարքով սերունդների համար ուրվագծել ճշմարիտ քրիստոնյայի ու մեծագույն հայի անօրինակ կերպարը, որի անսպառ եռանդի ու բացառիկ նվիրումի շնորհիվ բեկվում է հայ ժողովրդի հոգեւոր եւ ֆիզիկական ճակատագիրը։

Խորենացու «Հայոց պատմութեան» էջերում Մաշտոցի կերպարի արտաքին բարեմասնութիւններին համադրվում են սրբակենցաղ վարքն ու գործունեութիւնը՝ կազմելով կատարյալ ներդաշնակութիւն։ Պատմիչի հավաստմամբ Մեսրոպ Մաշտոցը գերազանցում էր ժամանակի առաքինի բոլոր մարդկանց. «Քանզի ամբարտաւանութիւն եւ մարդահաճութիւն առ ի նորա վարս տեղի գտանել երբեք ոչ կարացին, այլ հեզ եւ լաւակամ եւ բարեխորհուրդ գոլով, եւ երկնայնոցն զարդարեալ սովորութեամբք զինքն բոլորից ցուցանէր։ Վասն զի գոյր տեսլեամբ հրեշտակական, մտօք ծննդական, բանիւ պայծառ, գործովք ժուժկալ, մարմնով արտափայլեալ, սարասիւք անճառ, խորհրդակցութեամբ մեծ, հաւատով ուղիղ, յուսով համբերողական, սիրով անկեղծաւոր, ուսուցանելով անձանձրոյթ»¹¹։

ԵՐԿՈՒ ՀԱՆՃԱՐԵՂ ՀՍԿԱՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱՀԱՃՈ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մեսրոպ Մաշտոցի՝ մեր պատմութեան ոսկեդարի այս վսեմական ու մեծապանչ հերոսի կողքին ժամանակագիրները մեծագույն ակնածանքով հիշատակում են մեկ այլ իմաստուն ու օրհնելի անձնավորու-

⁹ ԼԵՕ, Ս. Մեսրոպ, էջ 146։

¹⁰ Հ. ՆԵՐՍԷՍ ՎՐԳ. ԱԿԻՆԵԱՆ, Ս. Մաշտոց վարդապետ. կեանքն եւ գործունեութիւնը հանդերձ կենսագրութեամբ Ս. Սահակայ, Վիեննա, 1949, էջ 10։

¹¹ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Հայոց պատմութիւն, էջ 445։

թյան՝ աստվածային գիտությունամբ, հարուստ ներաշխարհով, բարեպաշտ ու իմաստուն Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևին: Մատենագիրների՝ երկու հանճարեղ հսկաների զուգահեռ պատկերումը պատահական չէ. «մեր ազգին երկրորդ Լուսավորիչների»¹² կյանքն ու գործունեությունը, ազգաշահ առաքելությունը մեծ իմաստով պայմանավորված են եղել հայրենիքի պատմական ճակատագրով, ուստի եւ պատահական չէ այն իրողությունը, որ Սահակ Պարթևն առաջինն է, ում Մաշտոցը հայտնում է իր «բազմաժամանակեայ մտածութեան զխնդիրն» եւ նրանից ստանում «քաջալերութեան աւետիս»¹³: Լեոն իրավացիորեն նկատում է. «Երկուսը մի հոգի, մի միտք դառած, անբաժանելի զուգակիցներ են հանդիսանում մտաւոր գործունէութեան մէջ. այստեղից այլ եւս չէ կարելի այդ երկու անունները միմեանց կողքից հեռացնել»¹⁴:

Ազգափրկիչ այս ծրագիրը դառնում է թե՛ Վռամշապուհի, թե՛ Սահակ Պարթևի, թե՛ Հայոց արքունիքի բարձրաստիճան այլ այրերի հոգածության առարկան: Սակայն պետական մակարդակով արձագանք գտած գործողությունների շղթայում Մաշտոցը դարձյալ բախվում է դժվարության: Դանիելյան նշանագրերը իրենց «մուրացածո գծագրությամբ» անկատար ու պակասավոր էին հայերենի հնչյունաբանական համակարգը վերարտադրելու համար: Մաշտոցը հանձնառում է հաղթահարել անհաղթահարելին: Կորյունը, Խորենացին, Փարպեցին գրեթե նույնությամբ պատմում են Մեսրոպի առաքելական ճանապարհի մանրամասները: «Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օճան գտանելոյ,— գրում է Կորյունը:— Որում պարգեւէր իսկ վիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ. հայրական չափուն ծնեալ ծնունդս նորոգ եւ սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին»¹⁵:

Ուշագրավ է, որ աստվածաբանական միտքը Կորյունի այս խորհրդածությունը համարում է Արեւելաքրիստոնեական Եկեղեցու դավանական փորձառությունից եկող քրիստոսաբանական ընկալման անդրադարձ: «Ըստ այսմ,— գրում են Վ. Դերիկյանը եւ Հ. Քյոսեյանը,— ինչ հարաբերություն որ կա մտքի եւ նրա ծնունդը հանդիսացող տառի կամ խոսքի

¹² Վարք սրբոց, Պէյրութ, էջ 493:

¹³ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅԻ, Հայոց պատմություն, Երեւան, 1982, էջ 31:

¹⁴ ԼԷՕ, Ս. Մեսրոպ, էջ 183:

¹⁵ ԿՈՐՅՈՒՆ, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Երեւան, 1994, էջ 90:

միջեւ, նույնն առկա է Հայր Աստծու եւ Նրա մարմնացած Որդու միջեւ: Աստվածաբանական լեզվամտածողության մեջ առկա այս աղերսն այժմ օգնում է ճիշտ ընկալել հայտնութենական այն կարեւորությունը, որ Կորյունը վերապահում է Գրոց գյուտին»¹⁶:

Մեսրոպն իր աստվածային գյուտով նմանեցվում եւ հավասարվում է Տասնաբանյա Աստվածաշունչ պատվիրանները բերած Մովսես մարգարեին: Առհասարակ, երեք մատենագիրների աշխատություններում էլ Մաշտոցը երեւում է ինքնամոռաց ու համառ պրպտումների, անդու ջանքերի, մշտակա տքնանքի ու որոնումների, աղոթքների շղթայում, որի արդյունքում, ի վերջո, իրականանում է երկնային հրաշքը. աստվածային օրհնության եւ ուժի շնորհիվ Մաշտոցը՝ իբրեւ արժանի ընտրյալ, ստեղծում է հայոց գրերը:

Ուսումնասիրողները բազմիցս անդրադարձել են Մաշտոցի ստեղծած ալբուբենին, նրա հնարավոր նախատիպերի վերաբերյալ հայտնել տարատեսակ կարծիքներ, սակայն առավել էականն այն իրողությունն է, որ Մաշտոցի մեծագործությունը ոչ այնքան պայմանական նշաններով տառեր գծագրելու մեջ էր, որքան հայերենի հնչյունական համակարգը՝ իր նրբերանգներով մեծագույն ճշտությամբ վերարտադրելը: Այս առիթով Լեոն գրում է. «Հայոց աշխարհում կար մի կենդանի լեզու, բաժանված բազմաթիւ բարբառների: Իւրաքանչիւր հայաբնակ գաւառ, ինչպէս յայտնի է, ունի իր առանձին բառակազմական եւ հնչյունական ձեւերը: Պէտք էր գտնել հայոց լեզուի էական, ամեն տեղի համար ընդհանուր յատկութիւնները. պէտք էր տարրալուծել այդ լեզուն, գտնել նրա բոլոր ձայները, հնչիւնները, յարմարեցնել իւրաքանչիւր տառանշան մի յայտնի հնչիւնի, բայց այնպէս որ լեզուն չը զրկվի իր զարգերից, որոնք նրբութիւնների, նիւանսների մէջ են: Պէտք էր այնպէս անել, որ լեզուն ամբողջովին հանդէս գար գրերի մէջ, առանց պակասութիւնների, առանց խեղաթիւրումների: Ահա իսկապէս վիթխարի աշխատանքը, ահա մտատանջութիւնների մի կոյտ, որի մէջ հանճարը միայն կարող է գլուխ չը կորցնել»¹⁷:

Դարերի հեռավորությունից վերարժեւորելով հայերենի հնչյունական համակարգը՝ անվերապահորեն կարող ենք հաստատել Լեոյի կարծիքը. Ուսուցչապետը հավաքագրել-ստեղծել է հնչյունների կատարյալ ամբող-

¹⁶ «Հայ մատենագիրները Հայոց գրի եւ թարգմանչաց մասին», էջ 9–10:

¹⁷ Լէօ, Ս. Մեսրոպ, էջ 175–176:

ջություն, որ տասնհինգ դարից ավելի է ոչ միայն իրացնում է հայ հասարակության գրավոր հաղորդակցության գործառույթը, այլև հանդես է գալիս իբրեւ ժողովրդի հոգեբանության, հույզերի, երազանքների, մտածողության արտահայտման բացառիկ միջոց: Մ. Աբեղյանի գնահատմամբ մաշտոցյան այբուբենի այս կատարելությունը պայմանավորված էր Մաշտոցի՝ իր ժամանակի, նույնիսկ մեր ժամանակի համար հայերենի հնչունական նրբերանգների զարմանալի խոր իմացությունամբ:

Գրերի ստեղծումից հետո Մաշտոցի, ինչպես նաեւ Սահակ Պարթևի ծավալած լուսավորչական գործունեության մասին մեծ ակնածանքով ու ոգեւորությամբ են պատմում ժամանակագիրները: Հետագա ուսումնասիրողները եւս այդ ժամանակահատվածը համարում են նրանց գործունեության ամենափայլուն շրջանը՝ դպրոցների հիմնում, աշակերտների ընտրություն, հայոց գրերի ուսուցանում, ասորերեն ու հունարեն գրքերի թարգմանություն, Սուրբ Գրքերի քարոզում Հայոց աշխարհի «գազանամիտ, վայրենի, ճիվաղաբարո» կողմերում, հարեւան ժողովուրդների համար նշանագրերի ստեղծում եւ այլն: Ինքնամոռաց այս նվիրումը բացահայտում է ոչ միայն առաքինի ու բարեպաշտ քրիստոնյա հոգեւորականներին, այլև ազգային-քաղաքական բարձրագույն նպատակներ ունեցող հայ մարդուն, որն իրեն ձեռնհաս միջոցներով փորձում էր ոչ միայն ամրագրել հայոց ազգային ինքնությունը, այլև իմաստ տալ նրա գոյության փիլիսոփայությանը: Իրավացի է Մ. Աբեղյանը՝ նկատելով՝ Մաշտոցի ու Սահակի գործունեությամբ «մշակված էր սեփական ազգային գաղափարախոսություն, կար արդեն ինքնագիտակցության եկած եւ լավ պատրաստված ու հոգեպես զինված մի սերունդ, որ չէր կարող հեշտությամբ զինաթափ լինել»¹⁸:

Շատ կարելուր եւ նշանակալից է Մաշտոցի՝ Հայաստանի արեւմտյան հատված կատարած ուղեւորությունը, որի մասին Կորյունը տալիս է հպանցիկ տեղեկություններ: Փոխարենը Խորենացին հայտնում է, որ բյուզանդական գերիշխանության տակ գտնվող հատվածում հայոց գրերի գործածության իրավունք ստանալու համար այնտեղ է մեկնում Սահակ Պարթևը: Հայոց կաթողիկոսի նպատակային այցելությունը փաստացի մնում է անարդյունք: Ավելի ուշ կաթողիկոսն իր թոռ Վարդան Մամիկոնյանի եւ մի խումբ աշակերտների ուղեկցությամբ Թեոդոս Փոքր կայսեր եւ սուրբ

¹⁸ Մ. Ա. ԲԵՂՅԱՆ, Երկեր, հտ. Գ., Երեւան, 1968, էջ 99:

Ատտիկոս պատրիարքի¹⁹ մոտ՝ Կոստանդնուպոլիս արքայական քաղաքան է ուղարկում սուրբ Մեսրոպ Մաշտոցին: Վերջիններիս հաջողվում է համոզել կայսրին եւ մեծ փութաշանությամբ սկսել հայերենի ուսուցումը արեւմտյան հատվածում: Այս ընթացքում, ըստ Խորենացու, հույն եկեղեցականները Սահակ Պարթևին առաջարկում են Մաշտոցի միջոցով պայքարել բորբորիտոնների դեմ: Կորյունի հաղորդման համաձայն՝ Մաշտոցը «բորբորիտոսացն» կոչված աղանդի դեմ պայքարելիս ստիպված է լինում գավազանը գործի դնել, «ջարդելով, խանձելով, մրոտելով...» դուրս վռնել նրանց աշխարհից: Ժամանակաշրջանի իրագրությունը հաշվի առնելով՝ միանգամայն կարելի է հասկանալ եւ «արդարացնել Մաշտոցի գործադրած խստությունները»²⁰,— այս տեսակետն է հայտնում Մ. Մկրյանը: «Մխիթարականը այս տխուր պատմութեան մէջ այն է,— գրում է Լեոն,— որ անգթութիւնը Մեսրոպի անձնական յատկութիւններից չէր, այլ բղխում էր ժամանակի հասկացողութիւններից, որոնք ընդհանուր էին ամեն տեղ»²¹: Քրիստոնեության ամրապնդման ճանապարհին Մաշտոցին վերագրվող գործողությունները չեն ստվերում նրա լուսավոր կերպարը. ինչպես գրում է Լեոն, «մեծագործութիւնները երախտագիտութիւն են պահանջում»²² միայն:

ԱՍՏՎԱԾԱՇՆՁԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ

ՕՐՀՆՅԱԼ ԳՈՐԾԸ

Այնուհետեւ Մաշտոցն «առաջվա սովորությամբ» նվիրվում է թարգմանական գործին, վերանայում կատարածը, Բյուզանդիայից բերել

¹⁹ Որոշ հետազոտողներ առանձնակի կարեւոր են համարում Ատտիկոս պատրիարքի դերը: Արքեպիսկոպոս Մաղաքիա Օրմանյանը գրում է. «Թէոդոս Փոքր 16 տարեկան եղած էր, խնամակալութիւնն ալ իր Պոլսեցի քրոջ ձեռքն անցած էր, ուխտեալ կուսան մը, տակաւին ծաղկահասակ, եւ բոլորովին բարեպաշտութեանց նուիրեալ: Ատտիկոս ալ, որ 406ին ընտրուած էր, մեծ ազդեցութիւն կը վայելէր արքունեաց մէջ, Սահակի ընկերակից եղած էր, եւ մինչեւ իսկ կարծող կայ, թէ հայ ծագում ունէր»: Գ. Մաղոյանն այս խոսքերի կապակցությամբ նկատում է. «Սրան պէտք է միայն յարել, որ սուրբ Ատտիկոս Կոստանդնուպոլսեցին ոչ միայն հայ էր, այլեւ պատրիարքութեան օրօք անգամ պահել է հայկական առողջանութիւնն ու շեշտադրութիւնը, եւ «դրանով իր խօսքը խորթ էր յունական ականջին», տէ՛ս ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, §203, հմմտ. «Ազգային սուրբեր: Գիրք Ա.: Սուրբ Սահակ Սուրբ Մեսրոպ: Վարք», Վաղարշապատ, 2024, էջ 27, 28, 52, 79, հմմտ. “Preacher and Audience”, հտ. 1, Brill, 1998, էջ 179:

²⁰ Մ. ՄԿՐՅԱՆ, Հայ հին գրականության պատմություն (V–X դարեր), Երեւան, 1976, էջ 126:

²¹ ԼԷՕ, Ս. Մեսրոպ, էջ 230:

²² Անդ, էջ 227:

տալիս Հին եւ Նոր Կտակարանները՝ դրանք նորից թարգմանելու մտադրությամբ:

Եւ հայոց աստվածային լեզվով սուրբ հայրերի շնորհիվ վերածնվում է «Թարգմանությունների թագուհին»²³:

Պատմագրության այս տիրույթում հանդիպում ենք ուշագրավ փաստի: Փարպեցին իր Պատմության մեջ արձանագրում է, որ Մաշտոցի՝ տառերը ստեղծելուց անմիջապես հետո կենսական անհրաժեշտություն է դառնում Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը: Իսկ այդ կարեւորագույն ու առաջնահերթ խնդիրը, ըստ Փարպեցու, կարող էր լուծել միայն Սահակ Պարթեւը. «Եւ երանելին Մաշտոց եւ որ ընդ նմա պատուական քահանայքն էին՝ ոչ զօրէին համարձակել յայսպիսի սաստիկ եւ կարեւոր գործ, թարգմանել Գիրս ի յոյն լեզուոյն ի հայ բարբառս. վասն զի ոչ ինչ էին այնպէս տեղեակ գիտնապէս հրահանգին յունարէն ուսմանն»²⁴: Ավելին, Հայոց աշխարհի բոլոր մեծամեծները, ավագ քահանաները, Վռամշապուհը, Մաշտոցը աղաչանքով դիմում են կաթողիկոսին, որ նա նվիրվի հոգեւոր աշխատանքին՝ Աստվածաշնչի թարգմանությանը: Պատմիչը հավելում է խնդրատուների ուղղակի խոսքը՝ ընդգծելով Սահակի՝ այդ գործում անփոխարինելի լինելու հանգամանքը: «Զոր ոչ ումեք այլում ի Հայաստան աշխարհիս մարդկան գոյ հնար ձեռն արկանել յայդպիսի գործ մեծ,— ասում են նրանք:— Վասն զի եւ ոչ կարացաք հմուտ լինել եւ տեղեկանալ այդչափ արուեստաւոր ուսմանցդ, որպէս եւ քեզ տուաւ զօ-

²³ Ն. Ակինյանը, մեծապես արժեւորելով «Աստվածաշնչի» հայերեն առաջին թարգմանությունը, գրում է. «Աստուածաշունչ Գրոց թարգմանութիւնը ռահվիրան եղաւ հայ գրականութեան, հիմը՝ որուն վրայ կանգնուեցաւ հայ գրականութեան սքանչելատեսիլ շէնքը, աղբիւրը՝ ուսկից ծծեց հիւթ հայ մատենագրութիւնը եւ ծլեցուց ծաղկեցուց իւր ծոցէն բանաստեղծներ, աստուածաբաններ եւ պատմագիրներ: Աստուածաշունչ Մատենանը դասագիրքն եղաւ հայ մանկտույն անդէն ի սկզբան, չընթացս դարերու եւ այսօր իսկ՝ թոթովելու հայերէն լեզուն, ուսանելու զայն վճիտ ակնաղբիւրէն եւ ընդարձակելու իւր լեզուական հմտութիւնը ամեն դարու մէջ, որովհետեւ այդ Մատենանը թարգմանուած չէ իբրեւ լոկ կրօնական գրականութիւն, այլ հայացուած է այն այնպիսի դասական կատարելութեամբ, որ կարող է իրաւամբ զգացնել տալ հայ ընթերցողին թէ աստուածահրաման պատգամները հայաբարբառ հոսած են մարգարէներու եւ առաքեալներու բերնէն...»

Ոչ միայն գրականօրէն շահագործեց հայ ժողովուրդը Աստուածաշունչ Մատենանը, այլեւ գտաւ հոն հոգեկան սնունդ իւր երկար ճանապարհին համար: Հայ ժողովրդեան հաւատքը յեցած էր աստուածախօս պատգամներու անսխալականութեան վրայ. անոր վրայ յեցած էր հայր անցաւոր կեանքի տառապալից օրերուն եւ աստուածեղէն պատգամներու մէջ կը գտնէր իւր սփոփանքն ու մխիթարութիւնը... (Հ. ՆԵՐՍԷՍ ՎՐԴ. ԱԿԻՆԵԱՆ, Ս. Մաշտոց վարդապետ. կեանքն եւ գործունէութիւնը հանդերձ կենսագրութեամբ Ս. Սահակայ, էջ 2–3):

²⁴ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, Հայոց պատմություն, էջ 36:

րութիւն ճարտարութեան ի վերին օգնականութենէն յաղագս քո առաքի-
նասէր եւ պարկեշտ հոգւոյդ»²⁵:

Կորյունի գրքում կարգում ենք. «Եւ յարուցեալ յաղաւթիցն՝ եստեղծ
զնշանագիրս մեր՝ հանդերձ Ռուփինոսիւ աշակերտիւ Եպիփանու, որ ի
Սամոս էր միայնակեաց. կերպածեալ զգիրն ըստ հրամանի Մեսրոպայ
վարդապետին եւ երանելոյ, փոխադրելով հայերէն աթութայսն ըստ ան-
սայթաքութեան սիղոբայից հեղղենացւոցն: Եւ իսկ[կ]ոյն ի թարգմանու-
թիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռակաց իմաստնոյն Սո-
ղոմոնի, բովանդակելով զքսան եւ զերկուս յայտնիսն, զհին կտակարանսն
յեղու ի հայ բան: Եւ աշակերտք նորա Յովհան եւ Յուսէփ ի նոյնս նպաստ
լինէին»²⁶: Խորենացին, ամենայն հավանականությամբ հիմք ընդունելով
Կորյունի գիրքը, այս առնչությամբ գրում է. «Եւ յարուցեալ յաղօթիցն՝ ես-
տեղծ զնշանագիրս մեր, հանդերձ Հռոփանոսիւ կերպածեալ զգիրն առ
ձեռն պատրաստ Մեսրոպայ, փոխատրելով զհայերէն աթութայսն ըստ
անսայթաքութեան սիղաբայից Հելլենացւոց: Եւ իսկոյն ի թարգմանու-
թիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսեալ յԱռակացն, բովանդակելով
զքսան եւ զերկուս յայտնիսն, եւ զնոր Կտակս յեղու ի հայ բան, նա եւ
աշակերտք նորա Յովհան Եկեղեցացին եւ Յովսէփ Պաղնացի, միանգա-
մայն եւ զարուեստ գրչութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշա-
կերտացն»²⁷: Ակնհայտ է, որ Խորենացու եւ Կորյունի հաղորդումները²⁸
գրեթե նույն բովանդակությունն ունեն եւ, ըստ էութեան, հակասում են
Փարպեցու՝ վերը բերված մտքերին: Վերջինս թարգմանութեան ասպա-
րեզում Մաշտոցին ներկայացնում է իբրեւ համեստ ունակությունների
տեր անձնավորություն, որն առանց Սահակ Պարթեւի օժանդակութեան
եւ աստվածային միջամտութեան չէր կարող հասնել հաջողութեան: Իրա-
պես, անժխտելի է Սահակի մեծ ու անփոխարինելի ավանդը այս գործում.
այդպիսի հույժ ծանր եւ պատասխանատու գործ հնարավոր էր իրակա-
նացնել միայն մեծ հովանավորութեան ու զորեղ սատարի շնորհիվ, որպի-
սին այս դեպքում կաթողիկոս Սահակ Պարթեւն է՝ իբրեւ զարգացած ու

²⁵ Անդ, էջ 38:

²⁶ ԿՈՐՅՈՒՆ, Վարդ Մեսրոպ Մաշտոցի, էջ 118:

²⁷ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Հայոց պատմութիւն, էջ 404:

²⁸ Այս կապակցութեամբ Սո. Մալխասյանը նկատում է, որ Խորենացու տեղեկութիւնն արժանահավատ չէ, քանի որ Մաշտոցը չէր կարող երկու աշակերտների հետ հենց Ասորիքում թարգմանել Հին եւ Նոր Կտակարանները:

հեղինակավոր անհատականություն, սակայն պատմիչը Մաշտոց-Սահակ զուգահեռում հասնում է ծայրահեղության՝ Սահակին վերագրելով Սուրբ Գրքերի բոլոր թարգմանությունները:

Թերեւս այսօր կարիք չկա ապացուցելու Փարպեցու առաջադրած տեսակետի խոցելիությունը եւ վերահաստատելու ճշմարտությունը, որ Աստվածաշնչի թարգմանությունը կատարվել է երկու մեծերի ձեռքով միաժամանակ (մի կողմ թողնենք նաեւ նրանց ձեռնաստիճանային աշակերտների՝ Եզնիկի, Հովսեփի, Կորյունի ու Ղեւոնդի՝ այս ասպարեզում գործադրած ջանքերը): Առհասարակ, ի տարբերություն Խորենացու եւ Կորյունի, որոնք առանձին հետաքրքրություն են դրսևորում իրենց ուսուցչի կենսապատմի նկատմամբ, Փարպեցին անդրադառնում է միայն ամենահայտնի իրադարձություններին՝ ձեռնպահ մնալով ուսուցչին վերաբերող այլ տեղեկություններ հայտնելուց, փոխարենը փառքի ու իմաստության լուսապսակով ներկայացնում Սահակ Պարթևին: Առհասարակ, գրեթե բոլոր հետազոտողները Փարպեցու աշխատության այս հատվածի մասին նշում են, որ ամենայն հավանականությամբ այն ենթարկվել է որոշակի խմբագրումների, գուցե եւ աղճատումների: Անշուշտ, այս դեպքում կարեւորվում է հանգամանքը, որ մատենագիրներից յուրաքանչյուրը Մաշտոցի մասին գրելիս հետապնդում էր որոշակի նպատակ, հետեւաբար եւ նրան ներկայացնում է իր ըմբռնումների ու պատկերացումների շրջանակում: «Պատմիչի ստեղծագործական մեթոդի յուրահատկությունը եւ մարդու նկատմամբ խորաթափանցությունը, — գրում է Զ. Ավետիսյանը, — երեւում են հատկապես նրա կողմից իրականացված պատմական հերոսների կերպարակերտման մեջ»²⁹:

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ...

Նուրբ տարբերություններով են ներկայացվում նաեւ Մաշտոցի կյանքի վերջին օրերի ու վախճանի հետ կապված նկարագրությունները: Փարպեցին բավական սեղմ հաղորդում է, որ սուրբ Սահակի մահից վեց ամիս հետո վախճանվում է նաեւ երանելի Մաշտոցը, որի մարմինը Վահան Ամատունու նախաձեռնությամբ ամփոփվում է Օշականում:

Կորյունը որոշ մանրամասներ է հայտնում սիրելի ուսուցչի կյանքի վերջին շաբաթների ու օրերի մասին: Վարքագիր աշակերտը հատկապես գեղեցիկ է նկարագրում Ուսուցչի կյանքի վերջին պահերը. «Եւ մինչդեռ

²⁹ Զ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ե. դարի հայ պատմագրության տիպաբանությունը, Երեւան, 2013, էջ 129:

ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ սքանչելի խաշանման լուսաւոր շողաւոր ձեւ երեւէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր, զոր ամենայն ուրուք ինքնատես եղեալ, եւ ոչ առ յընկերէ պատմեալ: Եւ սորա սրբոցն զսէր եւ զմիաբանութիւն աւանդեալ, զմերձաւորս եւ զհեռաւորս արհնութեամբ պսակէր, եւ զհաճոյական աղաւթս հասուցեալ ի Քրիստոս՝ հանգեալ»³⁰: Կորյունը «Վարքի» բոլոր գրվագներում շարունակում է Մաշտոցին ներկայացնել իբրեւ մեծագործ մի սրբի, որի կյանքի վերջին բոպեններն անգամ լեցուն էին աստվածային ներկայութեամբ, սիրով ու շնչով:

Մաշտոցի (նաեւ Սահակ Պարթեւի) կերպարն աստվածային լուսապսակով է հանդես գալիս նաեւ Խորենացու երկի վերջին էջերում՝ իրականության ողբերգական ու արգահատելի համապատկերում. «Որովհետեւ ամբարտավանությունը եւ մարդահաճությունը նրա վարքում երբեք տեղ չգտան, այլ հեզ, բարյացակամ եւ բարեմիտ լինելով, երեւում էր բոլորին՝ երկնայինների սովորութեամբ զարդարված: Որովհետեւ նա հրեշտակի տեսք ուներ, ծննդական միտք, պայծառ էր խոսքով, գործերով ժուժկալ, մարմնով փառահեղ, սովորություններով աննման, խորհրդակցութեամբ մեծ, հավատով ուղիղ, հուսով համբերող, սիրով անկեղծ, ուսուցանելիս անձանձրույթ»³¹:

Կորյունը եւ Խորենացին մանրամասն գրում են Մաշտոցի հուղարկավորության մասին³², սակայն միայն Փարպեցու գրքում ենք հանդիպում այն հաղորդմանը, որ Ե. դարի վերջում հայ իրականության մեջ ամեն տարի «ամենափոյթ պատուով», մեծ հանդիսավորութեամբ նշվում է Մաշտոցի հիշատակը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, Ե. դարի մատենագրության էջերում Մաշտոցի համեստ, բարեպաշտ, աստվածավախ բնավորությունը միանալով բնատուր տաղանդին, անխոնջ աշխատասիրությանը, անօրինակ հայրենասիրությա-

³⁰ ԿՈՐՅՈՒՆ, Վարք Մեսրոպ Մաշտոցի, էջ 105:

³¹ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Հայոց պատմություն, էջ 312:

³² Խորենացին Մաշտոցի հուղարկավորության մանրամասները ներկայացնելիս գրում է. «Ինչպես լսեցի բազմաթիվ եւ արժանահավատ անձերից, խաչի ձեւով աղոտ լույս էր շողում այն տան վրա, որտեղ երանելին հոգին ավանդեց. եւ շուտով շանհետացավ այս շողքը, քչերին տեսանելի չեղավ, այլ բոլոր բազմությանը, այնպես որ շատ անհավատներ մկրտվեցին...» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, էջ 312):

նը կերտում է ստեղծագործող հոգեւորականի մի բարձր կերպար, որին կենսական ուժ են հաղորդում Աստված եւ հայրենիք: Մեսրոպ Մաշտոցի անունը հայ ժողովրդին մշտապես տոգորում է ազգային արժանապատվության բարձր գիտակցութեամբ եւ նրա հիշողութեան մատչանում կմնա այնքան ժամանակ, քանի կան հայն ու Հայաստանը:

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթեւ, Մովսէս Խորենացի, Ղազար Փարպեցի, Կորյուն, Սուրբ Գիրք, հայոց սուրբ գրություններ, հոգեւոր առաջնթաց, կրթություն, թարգմանություն, պատմագրություն, հոգեւոր վարք, ամենայն հայոց ուսուցիչ, ազգային գործիչ:

РЕЗЮМЕ

В рамках исследовательского вопроса нашей целью является осмысление образа великого Учителя, возникающего на страницах библиографии V века, которая в собственном смысле, конечно, не является художественной концепцией, но как портрет жизни, нарисованный на реальной основе, она представляет собой нечто большее, чем художественный образ. Она несет в себе исторически точные, вместе с тем в высшей степени персонализированные признаки, обусловленные жанровой спецификой историографии и этикета, ее композиционной природой.

«Поведение Маштоца» Корюна, произведения Мовсеса Хоренаци и Газара Парпеци имеют исключительное историко-культурное и источниковедческое значение с точки зрения оценки учителя как космического феномена, которые в эти беспокойные времена переоценки системы ценностей являются красноречивым свидетельством утверждения национального величия.

Основополагающими и движущими силами мировоззрения Маштоца являются христианская вера и благочестие, добродетель, восходящая к библейским корням, безусловная любовь к родине и к армянам. Между строками библиографии раскрываются и человеческая, и социальная, и национально-духовная характеристика армянского учителя, его миссия национального защитника. Маштоц своим божественным изобретением уподобляется проро-

ку Моисею, принесшему Десять Заповедей. В целом в трудах всех трех летописцев Маштоц предстает в цепи самоотверженных и упорных исследований, неустанных усилий, постоянного труда и поиска, молитв, в результате которых, в конце концов, осуществляется небесное чудо: благодаря божественному благословению и силе Маштоц, как достойный избранник, создает армянский алфавит.

SUMMARY

Within the framework of our research question, our goal is to reflect on the image of the great Teacher that emerges from the pages of the 5th-century literature, which, in its own sense, is certainly not an artistic concept, but as a portrait of life painted on a real basis. It represents something more than an artistic image and carries historically accurate, yet highly personalized features, conditioned by the genre specificity of historiography and etiquette, as well as by its compositional nature.

“The Life of Mashtots” by Koryun, the works of Movses of Khoren and Ghazar Parpetsi are of exceptional historical, cultural, and source-studies significance in terms of evaluating the teacher as a cosmic phenomenon, which in these turbulent times of reevaluating the value system are eloquent testimony to the affirmation of national greatness.

The fundamental and driving forces behind Mashtots’ worldview are the Christian faith and piety, virtues rooted in the Bible, and unconditional love for his homeland and the Armenian people. The sub-layers of the literature reveal the human, social, and national-spiritual characteristics of the Armenian teacher and his mission of preserving the national identity. Mashtots, with his divine invention, is compared and equated to the prophet Moses, who brought the Ten Commandments. In general, in the works of all three chroniclers, Mashtots appears in a chain of selfless and persistent research, tireless efforts, constant work, search and prayers, as a result of which, in the end, a heavenly miracle is performed: thanks to the divine blessing and power, Mashtots, as a worthy chosen one, creates the Armenian alphabet.

